

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱԿԱՐՅԱՆ ԼԻԼԻԹ ԱՍՔԱՆԱԶԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
(1921-1937 թթ.)

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների դոկտոր
Վիրաբյան Ա. Ս.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր
Մանուկյան Ա. Ս.

պատմական գիտությունների թեկնածու,
դոցենտ Գևորգյան Է. Գ.

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2011 թ. դեկտեմբերի 16-ին ժամը 14⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՅ-ի 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2011 թ. նոյեմբերի 14-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Սուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐԴԻՎԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի անկախության վերականգնումից (1918թ.), ապա խորհրդային իշխանության հաստատումից հետո երկիրը գտնվում էր բարդ իրավիճակում: Տնտեսությունն ամբողջությամբ քայքայվել էր անընդհատ շարունակվող պատերազմների, քաղաքացիական կռիվների պատճառով: Երկրում մոլեգնում էր սովն ու համաճարակը, իսկ խորհրդային կառավարությունը միայնակ չէր կարող այս բոլոր խնդիրների համար լուծում գտնել: Անհրաժեշտ էր միավորել բոլոր ջանքերը, այդ թվում՝ օգտագործել երկրից դուրս ապրող հայության մտավոր և նյութական կարողությունները:

Ահա այս նպատակով ստեղծվեց «Հայաստանի օգնության կոմիտե» (ՀՕԿ) հասարակական կազմակերպությունը, որը, խորհրդային իրականության պայմաններում գործելով 16 տարի (1921-1937 թթ.), իբրև ՀՍԽՉ ժողկոմխորհին առընթեր կառույց՝ իրականացրեց և տնտեսական, և հասարակական, և քաղաքական գործունեություն:

ՀՕԿ-ի հիմնադիր անդամները պետական և հասարակական գործիչներ էին, արվեստագետներ, գրականագետներ, ականավոր մտավորականներ, ովքեր անկախ իրենց քաղաքական հայացքներից և սոցիալական դիրքից, համախմբվել էին մեկ ընդհանուր գաղափարի շուրջ՝ օգնել Հայաստանի կարիքավոր բնակիչներին՝ հայթայթելով և բաշխելով պարեն, հագուստեղեն, դեղորայք և այլ անհրաժեշտ ապրանքներ, ինչի շնորհիվ հնարավոր եղավ մեղմել երկրում ահազանացող սովն ու համաճարակը: Այդ տեսանկյունից մեծ կարևորություն ունի հիշյալ խնդիրների ամբողջական լուսաբանումը:

Սակայն առաջնահերթը, թերևս, սփյուռքահայությունից ստացվող նյութական օգնությունը կազմակերպելու և ճիշտ տնօրինելու խնդիրն էր, որի համար ՀՕԿ-ի մասնաճյուղեր ստեղծվեցին աշխարհի գրեթե բոլոր հայաշատ վայրերում՝ խորհրդային հանրապետություններում, հարևան Պարսկաստանում, Եվրոպայի, Լատինական և Հյուսիսային Ամերիկաների զանազան քաղաքներում, Մերձավոր Արևելքում: Առանց սփյուռքահայության նյութական աջակցության անհնարին կլիներ Հայաստանում իրականացված բազմաթիվ շինարարական և այլ բնույթի ծրագրերի իրագործումը, ինչը ՀՕԿ-ի արտասահմանյան գործունեության մի մասն էր կազմում: Սփյուռքահայության պատմության համար այդ կարևոր ժամանակահատվածը դեռևս ամբողջական չի ուսումնասիրվել, ուստի, ատենախոսությունը կարևորվում է նաև այդ տեսանկյունից, որից անմասն չի մնում նաև ՀՕԿ-ի, հայրենակցական միությունների, սփյուռքահայ կուսակցությունների հարաբերությունների խնդրի լուսաբանումը, որն այժմեական է և ուսանելի:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԼՊՍԱԿԱՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ:

Ատենախոսության նպատակն է արխիվային վավերագրերի, մամուլի, պատմագիտական գրականության հիման վրա անաչառ լուսաբանել ՀՕԿ-ի՝ խորհրդային Հայաստանում ստեղծված առաջին համահայկական կազմակերպության գործունեությունը: Այդ նպատակով մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

- ներկայացնել ՀՕԿ-ի կազմակերպման անհրաժեշտությունը և կազմակերպչական գործընթացը.
- անդրադառնալ Հայաստանի վերաշինությանը ՀՕԿ-ի մասնակցությանը.
- լուսաբանել ՀՕԿ-ի մասնաճյուղերի ստեղծումն ու գործունեությունը.

- բացահայտել Սփյուռքում ՀՕԿ-ի քարոզչական գործունեության հետ կապված կարևորագույն անցքերը և սփյուռքահայ ավանդական կուսակցությունների հետ առնչությունները:

- հանրագումարի բերել ՀՕԿ-ի կատարած աշխատանքները:

ԱՏԵՆԱԽՈՍԻԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԿԱՆ ՀԻՍՄԸ:

Ատենախոսությունը շարադրելիս առաջնորդվել ենք պատմահանձնատական և պատմաքննական մեթոդաբանությամբ, արխիվային վավերագրերի, հրատարակված սկզբնաղբյուրների, մամուլի, ուսումնասիրությունների համադրման և վերլուծության սկզբունքով: Եզրահանգումները կատարվել են միայն փաստական նյութի հիման վրա, որոնց զգալի մասն առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ:

ԱՏԵՆԱԽՈՍԻԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ:

Ատենախոսությունը ժամանակագրական առումով ընդգրկում է 1921-1937 թվականները՝ ներկայացնելով Խորհրդային Հայաստանում ստեղծված «Հայաստանի օգնության կոմիտե» հասարակական կազմակերպության ամբողջական գործունեությունը: 1937թ. դեկտեմբերին ՀՍԽ՜Յ ժողովմսխորիը լուծարում է այն, սակայն արխիվային վավերագրերի միջոցով պարզ է դառնում, որ ՀՕԿ-ի արտասահմանյան մասնաճյուղերը տեղ-տեղ շարունակել են գործել: Մասնավորապես ՀՕԿ-ի ԱՄՆ-ի մասնաճյուղերն իրենց գործունեությունը դադարեցրել են 1938թ.՝ Պետական հայկական կարմիր խաչի հետ փոխակերպվելով Ամերիկահայ առաջադիմական միության:

ԱՏԵՆԱԽՈՍԻԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՆԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Կոմիտեի նպատակների, դերի, գործունեության վերաբերյալ ամբողջական ուսումնասիրություն չի հրատարակվել, ուստի պատմագիտության համար չափազանց կարևոր է Հայաստանի ստացած օգնության հիմնախնդրի ուսումնասիրումը և նորովի ու անաչառ լուսաբանումը: Ատենախոսությունը գիտականից բացի ունի նաև ճանաչողական, քաղաքական և գործնական նշանակություն: Մասնավորապես ՀՕԿ-ի գործունեությունը, որոշակի առումով, ուղեցույց կարող է հանդիսանալ այսօր Սփյուռքի հանդեպ Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականության, արտերկրի հայության հնարավորությունները հայրենիքի գարգացմանն ուղղելու, զանազան այլ համահայկական ծրագրերի իրականացման, միջոցառումների անցկացման մեթոդները մշակելիս: Ատենախոսությունը կարևոր և արդիական է նաև սփյուռքահայ, այդ թվում՝ կուսակցական շրջանակների համար՝ իրենց գործելաոճը, դիրքորոշումները ճշգրտելու և դրանք հայ ժողովրդի ու Հայաստանի Հանրապետության գորեղացման ծառայեցնելու տեսանկյունից:

ԹԵՄԱՅԻ ՈՒՄՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ (ԱՐՁՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ)

Խորհրդային իրականության պայմաններում ստեղծված այս կազմակերպության ամբողջական գործունեության լուսաբանումը ներկայացնելիս հիմնականում օգտագործել ենք Հայաստանի ազգային արխիվում (ՀԱԱ) պահվող փաստաթղթերը: ՀԱԱ-ում պահպանվող ՀՕԿ-ին առնչվող փաստաթղթերի շնորհիվ հաջողվել է վեր հանել կազմակերպության գործունեության հետ կապված հիմնական մանրամասները: Օգտագործվել են նաև Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի (ԳԱԹ) Հովի. Թումանյանի, Ա. Երզնկյանի, Կ. Միքայելյանի անձնական ֆոնդերում պահվող փաստաթղթերն ու նյութերը:

Խնդրո առարկա թեմայի ուսումնասիրման համար բացի անտիպ փաստաթղթերից մեր կողմից օգտագործվել են հետխորհրդային շրջանում հրատարակված սկզբնաղբյուրներ՝ փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ, փաստաթղթերի հավաքածուներ, մամուլ, այդ թվում՝ սփյուռքահայ, ինչպես նաև խորհրդային և հետխորհրդային շրջանում հրատարակված մի շարք ուսումնասիրություններ (այդ թվում նաև սփյուռքահայ հեղինակների) և այլն:

ԶՅԴ-ի և Խորհրդային Զայաստանի փոխհարաբերությունների, ինչպես նաև հայրենադարձության կազմակերպման հարցերը ուսումնասիրելիս օգտվել ենք 1999թ. Վլ. Ղազախեցյանի հրատարակած «Զ. Յ. Ղազնակցությունը և խորհրդային իշխանությունը» փաստաթղթերի ժողովածուից¹, որի ժամանակագրական սահմաններն ընդգրկում են 1920-1930-ական թվականները: Խորհրդային իշխանության փլուզումից հետո այս ժողովածուն իր բնույթով առաջինն է հայ պատմագիտության մեջ, թեև ցանկալի կլիներ տեսնել նաև այնպիսի փաստաթղթերի ժողովածուներ, ուր խնդիրը կներկայացվեր նաև խորհրդային իշխանության, այսինքն՝ Խորհրդային Զայաստանի նկատմամբ Զայ հեղափոխական դաշնակցության բռնած դիրքի և վարած քաղաքականության տեսանկյունից:

Կարևոր է նաև Վլ. Ղազախեցյանի կողմից «Բանբեր Զայաստանի արխիվների» հանդեսում հրապարակված «Սփյուռքում խորհրդային իշխանության քաղաքականության հարցի շուրջ» վերնագրով փաստաթղթերի հավաքածուն², ուր ներկայացված է 1928թ. գաղափարական-քաղաքական պայքարի պայմաններում խորհրդային իշխանության և ԶՕԿ-ի որդեգրած դիրքորոշումը՝ Սփյուռքի և հայրենադարձության կազմակերպման առնչությամբ:

Ատենախոսությունը շարադրելիս օգտագործել ենք նաև «Բանբեր Զայաստանի արխիվների» հանդեսում Վլ. Ղազախեցյանի հրապարակած «Զայկական միացյալ պատվիրակության գործունեությունը Լոզանի կոնֆերանսում (1922-1923 թթ.)»³ վերտառությամբ փաստաթղթերի հավաքածուն, իսկ հայ գաղթականության հարցում Ազգերի ընկերակցությունում (լիգա) Ս. Պապաջանյանի մասնակցությունը ներկայանելիս՝ 2005թ. Զայաստանի ազգային արխիվի կողմից հրատարակված «Զայ դատի նվիրյալը: Ֆրիտյոֆ Նանսեն» փաստաթղթերի ժողովածուն⁴:

Դիտարկվող թեմայի առնչությամբ՝ հատկապես ԶՍԽԶ ղեկավարության, ԶՕԿ-ի և հայ հոգևորականության փոխհարաբերությունների հարցը քննելու տեսանկյունից արժեքավոր է եղել նաև Ս. Բեիբուդյանի կազմած փաստաթղթերի ժողովածուն⁵:

¹ Տես Զ. Յ. Ղազնակցությունը և խորհրդային իշխանությունը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), պատ. խմբ. և կազմող՝ Վլ. Ղազախեցյան, Երևան, 1999:

² Տես Ղազախեցյան Վլ., Սփյուռքում խորհրդային իշխանության քաղաքականության հարցի շուրջ, Բանբեր Զայաստանի արխիվների, Երևան, 2008, N 2, էջ 109-124:

³ Տես Ղազախեցյան Վլ., Զայկական միացյալ պատվիրակության գործունեությունը Լոզանի կոնֆերանսում (1922-1923 թթ.), Բանբեր Զայաստանի արխիվների, Երևան, 2007, N 1-2, էջ 98-120:

⁴ Տես Զայ դատի նվիրյալը: Ֆրիտյոֆ Նանսեն (1920-1930 թթ.), Երևան, 2005:

⁵ Տես Վավերագրեր հայ եկեղեցու պատմության: Գիրք Բ, Խորեն Ա Մուրադբեկյան. Կաթողիկոս Ամենայն Զայոց (հոգևոր գործունեությունը 1901-1938 թթ.), կազմող՝ Ս. Ա. Բեիբուդյան, Երևան, 1996:

ՀՕԿ-ի գործունեությունն անաչառ ներկայացնելու համար օգտագործվել է նաև սփյուռքահայ՝ հատկապես կուսակցական մասնուլը, մասնավորապես «Հայրենիք», «Դրոշակ», «Հնչակ», Նյու Յորքի «Հայաստանի կոչնակ» ամսագրերը, «Երիտասարդ Հայաստան», «Պալքանյան մասնուլ», «Յառաջ», «Ապագա», «Պայքար», Թեհրանի և Նյու Յորքի «Բանվոր», Փարիզի «Երևան», Ֆրեզնոյի «Մշակ» և «Ասպարեզ», «Կռունկ», «Նոր օր», «Հայրենիք», ինչպես նաև «Խորհրդային Հայաստան», «Կարմիր աստղ» (հետագայում՝ Մարտակոչ) և «Заря Востока» թերթերը: Թեմայի լուսաբանման համար ուսումնասիրվել է ՀՕԿ-ի հրատարակած «Հայաստանի օգնութեան կոմիտե» թերթը, «Հրավիրակ», «ՀՕԿ-ի տեղեկատու», ինչպես նաև մասնաճյուղերի՝ Նյու Յորքի «Շինարար», Փարիզի և Դամասկոսի «ՀՕԿ», Մոսկվայի «Возрождающаяся Армения», «Вестник Московского комитета помощи Армении» ամսագրերը:

Խորհրդային իշխանության հաստատումից հետո պատմագիտական ուսումնասիրությունները շարադրվում էին խորհրդային գաղափարախոսության լուսի ներքո: Այդ տարիներին հայ ժողովրդի կարևոր հիմնախնդիրներից էր գաղթականության ճակատագիրը:

Հայ գաղթականության, Խորհրդային Հայաստանի և սփյուռքահայ կուսակցությունների փոխհարաբերությունների հետ կապված խնդիրները լուսաբանելու հարցում անգնահատելի արժեք է ներկայացնում ակադմիոր կուսակցական-պետական գործիչ Ալ. Մարտունու (Ալ. Մյասնիկյան) Թիֆլիսում հրատարակած «Կուսակցությունները գաղութահայության մեջ» աշխատությունը¹: Հեղինակը, ներկայացնելով գաղթավայրերի հայ տարագիրների տնտեսական ու սոցիալական ծանր վիճակը, ճիշտ է ըմբռնում նրանց Խորհրդային Հայաստանում ընդունելու և տեղավորելու հրամայական անհրաժեշտությունը: Հատկապես հիշատակման է արժանի աշխատության վերջին տողերում տեղ գտած հետևյալ ձևակերպումը. «Հայաստանում կարմիր առավոտ ե. հայ ազատագրված բանվորն ու գյուղացին կուզեն, վորպեսզի վառ արշալույսը սփռվի և գաղութահայ աշխատավորության վրա»²:

Հայրենադարձության խնդրի նկատմամբ Խորհրդային Հայաստանի կառավարության վերաբերմունքի մասին կարևոր դիտարկումներ են ներկայացված նաև 1924թ. Թիֆլիսում Ալ. Մարտունու հրատարակած մեկ այլ՝ «Խորհրդային Հայաստանի ուղին» գրքույկում³: Այդ հրատարակությունն իր մեջ ամփոփում է Ալ. Մյասնիկյանի զեկուցում-ճառը, որ նա արտասանել է Հայաստանի խորհուրդների առաջին համագումարում՝ 1922թ. հունվարի 30-ին, ինչպես նաև Խորհրդային Հայաստանի երկրորդ տարեդարձի առթիվ «Խորհրդային Հայաստան» թերթում տպագրված մի շարք հոդվածներ:

Գաղթականության և հայրենադարձության մասին կարևոր դիտարկումներով առանձնանում է կուսակցական-պետական գործիչ Աշոտ Հովհաննիսյանի հրատարակած «Գաղութահայ խնդիրներ» գրքույկը⁴: Հեղինակը հատկապես մատնանշում է մի շարք ուղիներ, որոնց իրականացման շնորհիվ գաղթականության և որբերի խնդիրների լուծման հեռանկարը կլիներ մշմարելի: Նրա կարծիքով խնդիրը կարելի էր լուծել միայն Կոմկուսի դրոշի ներքո, և անհնա-

¹ Տե՛ս Մարտունու Ալ., Կուսակցությունները գաղութահայության մեջ, Թիֆլիս, 1924:

² Նույն տեղում, էջ 139-140:

³ Տե՛ս Մարտունու Ալ., Խորհրդային Հայաստանի ուղին, Թիֆլիս, 1924:

⁴ Տե՛ս Հովհաննիսյան Ա., Գաղութահայ խնդիրներ, Երևան, 1925:

րին էր համարվում համագործակցությունը Հայ հեղափոխական դաշնակցության հետ: ՀՕԿ-ի գործունեությանն անդրադառնալիս Ա. Հովհաննիսյանը ՀՕԿ-ի արտասահմանյան մասնաճյուղերը համարում է «ռամկավարական խաղերին ենթակա կազմակերպություններ»¹:

Բնական է, որ մի շարք երկրներում ՀՕԿ-ի մասնաճյուղերը, կազմակերպվելով այս կամ այն կուսակցական գործիչների կողմից, կրելու էին համապատասխան կուսակցությունների ազդեցությունը: Սակայն հետագայում տեսնում ենք, որ ՀՕԿ-ի արտասահմանյան մասնաճյուղերի ղեկավար մարմիններից աստիճանաբար հեռացվում են սփյուռքահայ կուսակցություններին ու կազմակերպություններին պատկանող անհատները:

Ալեքսանդր Մյասնիկյանի և Աշոտ Հովհաննիսյանի վերոնշյալ գործերը տասնյակ տարիներ հայ պատմաբանների համար Հայրենիք-Սփյուռք փոխհարաբերությունները ուսումնասիրելու և լուսաբանելու հարցում կարևոր ուղեցույց են հանդիսացել:

ՀՕԿ-ի գործունեությունն առաջին անգամ ներկայացրել է Արշակ Վարդապետյանը՝ 1966թ. հրատարակած «Հայաստանի օգնության կոմիտե» գրքույկում²: Առաջին հայացքից կարող է թվալ, թե գրքույկում ներկայացված է ՀՕԿ-ի ամբողջական գործունեությունը: Սակայն վստահաբար կարելի է նշել, որ հեղինակը մակերեսորեն է ուսումնասիրել խնդիրը, որը հնարավորություն չի տվել խորությամբ ընկալել և վեր հանել ՀՕԿ-ի իրական գործունեության հետ կապված այն բոլոր կարևորագույն անցքերը, որոնք կարող էին լույս սփռել մի շարք հարցերի արդարացի պարզաբանման վրա: Գրքույկի մի մասը նվիրված է ՌՍՖՍՀ-ում Ամերիկյան օգնության աղմինիստրացիայի (ԱՐԱ) գործունեությանը, Խորհրդային Ռուսաստանի ծանր վիճակին, շեշտված թշնամանքով ներկայացվել է դաշնակցականների գործունեությունը (այս հարցին գրքույկում առանձին բաժին է հատկացված): Միակողմանի և խորհրդային իշխանության ոգուն համահունչ լուսաբանված են հատկապես Հայաստանի օգնության կոմիտեի և սփյուռքահայ կուսակցությունների փոխհարաբերություններին վերաբերող հատվածները: Մասնավորապես գրքույկը սկսվում և վերջանում է խորհրդային իշխանության (հատկապես Խորհրդային Ռուսաստանի) գովաբանությամբ և Հայ հեղափոխական դաշնակցության դատափետունով: Ա. Վարդապետյանը չի անդրադարձել ՀՕԿ-ի գործունեության այն էջերին, որոնք ներառում են խորհրդային գաղափարների քարոզչություն, ուղղորդված հակադաշնակցական առաքելություն և այլն: Իսկ ՀՕԿ-ի արտասահմանյան՝ մասնավորապես ԱՄՆ-ի, Լատինական Ամերիկայի, Եվրոպայի, Մերձավոր Արևելքի, երկրներում գործող մասնաճյուղերի գործունեության մասին գրեթե ոչինչ չի ասվում: Միայն հպանցիկ անդրադարձ է կատարված Հայաստանի օգնության կոմիտեի Անդրկովկասի, Խորհրդային Ռուսաստանի, Միջին Ասիայի մասնաճյուղերի գործունեությանը: Հեղինակը բացարձակապես չի ուսումնասիրել սփյուռքահայ՝ հատկապես կուսակցական մամուլը, որի շնորհիվ հնարավոր կլիներ ամաչառ ներկայացնել ՀՕԿ-ի արտասահմանյան գործունեության հետ կապված մի շարք կասկածելի դրվագներ:

¹ Նույն տեղում, էջ 21:

² Տե՛ս Վարդապետյան Ա., Հայաստանի օգնության կոմիտե (ՀՕԿ), Երևան, 1966:

Բացի վերոնշյալ բացթողումներից, գրքույկում առկա են որոշ փաստագրական սխալ տեղեկություններ*:

Սփյուռքահայության և նրա միջավայրում գործող հայկական կուսակցությունների նկատմամբ իրականացվող քաղաքականության ընթացքում խորհրդային կառավարությունը հենվում էր խորհրդային իրականության ծնունդ հանդիսացող ԶՕԿ-ի վրա՝ փորձելով նրա միջոցով Սփյուռքում տարածել խորհրդային գաղափարներ:

Եզիպտահայ անվանի հասարակական գործիչ, հրապարակախոս և ծաղրանկարիչ Գառնիկ Սվազյանը, ով նաև Ալեքսանդրիայում ԶՕԿ-ի ակտիվ գործիչներից էր, 1965թ. տպագրած «Հայրենիքիս համար» ժողովածուում¹ անփոփ տեղեկություններ է ներկայացնում իր հասարակական-հրապարակախոսական գործունեության և Եզիպտոսում ԶՕԿ-ի և ԶԳԴ-ի միջև եղած լարված փոխհարաբերությունների մասին, որոնք ևս կարևոր են ԶՕԿ-ի արտասահմանյան գործունեությունը լուսաբանելիս:

Եկեղեցական վեճերի և վերը նշված խնդիրների մասին սփյուռքահայ կուսակցական մամուլի հիման վրա վերլուծություններ է կատարել նաև սփյուռքահայ մեկ այլ հեղինակ՝ Ա. Պարտիգյանն իր «Հայ եկեղեցւոյ տագնապը եւ անոր պատասխանատուները» գրքում², ով, սակայն, անթաքույց կողմնակալությամբ արդարացրել է ԶԳԴ-ի գործելաճը՝ ընդգրկելով նաև մամուլ սպրդած հայկական պետականությանը վնասող կուսակցական գաղափարներ պարունակող հոդվածներ:

Ժողովրդական տնտեսության վերականգնման և խորհրդային Հայաստանում հետագա տարիներին իրականացված հայրենադարձության և հարակից այլ խնդիրների ամբողջական պատմությունը շարադրելու առաջին փորձը 1975թ. Հ. Մելիքսեթյանի «Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան 1915-1940 թթ.» մենագրությունն էր³: Թեև հայրենադարձության կազմակերպման գործում այս աշխատությունում միակողմանի ընդգծված է խորհրդային Հայաստանի կառավարության դերը, իսկ Հայ հեղափոխական դաշնակցության մասին հեղինակի պատկերացումները համապատասխանում են խորհրդային պաշտոնական գաղափարախոսությանը, այնուամենայնիվ աշխատությունը ժամանակին մեծ դեր է ունեցել և խթան հանդիսացել հետագայում հայ գաղթականության հետ կապված խնդիրներն ավելի մանրամասն ուսումնասիրելու գործում:

Շարունակելով հիմնախնդրի ուսումնասիրությունը՝ Հ. Մելիքսեթյանը 1985թ. հրատարակեց «Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադար-

* Հեղինակը, օգտվելով ՀԽՍՀ ԶՅՍՀ ՊԿՎ-ի (այժմ՝ ՀԱԱ) փաստաթղթերից, նշում է, որ ԶՕԿ-ի 2-րդ համագումարը տեղի է ունեցել 1922թ. հուլիսի 20-23-ը (տե՛ս Վարդապետյան Ա., նշվ. աշխ., էջ 48), այնինչ՝ համագումարի արձանագրությունները պարունակող համապատասխան արխիվային գործից պարզ է դառնում, որ համագումարն իր աշխատանքներն ավարտել է 1922թ. հուլիսի 26-ին (տե՛ս ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 33, թ. 35): Գրքույկում առկա են նմանատիպ այլ սխալներ ու բացթողումներ:

¹ Տե՛ս Սվազյան Գ., Հայրենիքիս համար, Երևան, 1965:

² Տե՛ս Պարտիգեան Ա., Հայ եկեղեցւոյ տագնապը եւ անոր պատասխանատուները, Պոսքն, 1936:

³ Տե՛ս Մելիքսեթյան Հ., Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան 1915-1940 թթ., Երևան, 1975:

ծությունը 1920-1980 թթ.» մենագրությունը¹, որն ամբողջացնում էր հեղինակի կողմից նախորդ տարիներին հայրենադարձության խնդիրներին, Հայաստանի օգնության կոմիտեի, խորհրդային կառավարության գործունեության մասին հրատարակած առանձին հոդվածները, գրքույկները և այլն: Կատարված բազմակողմանի ուսումնասիրությունների շնորհիվ հեղինակի կողմից հայրենադարձության հետ կապված հարցերն այս աշխատությունում ավելի լրջորեն են ներկայացված: Հատկապես մանրամասն ներկայացված է Ազգերի ընկերակցության կողմից տարիներ շարունակ չարչրկված հայ գաղթականության թեման:

Հ. Մելիքսեթյանի վերոհիշյալ աշխատություններում ՀՕԿ-ի դերն ընդգծված է հայրենադարձության աշխատանքները կազմակերպելու տեսանկյունից, որին ատենախոսության շարադրման ընթացքում մեծ կարևորություն է տրվել:

Յետխորհրդային շրջանում հրատարակված ուսումնասիրություններում ևս որոշակի անդրադարձներ կան ՀՕԿ-ի գործունեությանը:

Սփյուռքահայ կուսակցություններից Ռամկավար ազատական կուսակցության և Խորհրդային Հայաստանի առնչությունների հարցը ներկայացնելուն (հարցը սերտ աղերս ունի ՀՕԿ-ի գործունեության հետ) մեծապես նպաստել է Կ. Դալլաքյանի կողմից 1999թ. հրատարակված «Ռամկավար ազատական կուսակցության պատմություն» աշխատությունը², ուր մեծ կարևորություն է տրվել սփյուռքահայ մամուլի ուսումնասիրությանը և ՌԱԿ-ի գործունեությանը վերաբերող փաստաթղթերին: Աշխատությունում, սակայն, հղումները տրված են անձնական արխիվի հիման վրա, որոնք, հետագայում հանձնվելով Հայաստանի ազգային արխիվ, մշակվելուց հետո տեղ են գտել համապատասխան ֆոնդում: Ուստի կարևոր է համարվել այդ արձանագրությունները ներկայացնել տվյալ ֆոնդից և հղումներում նշել Հայաստանի ազգային արխիվը:

Կ. Դալլաքյանի 1994թ. հրատարակած «Ակնարկներ սփյուռքահայ հասարակական մտքի պատմության» աշխատությունում³ ուսումնասիրվել է սփյուռքահայ հանրային մտքի ձևավորման ակունքները, ներկայացվել Լոզանի կոնֆերանսի և հատկապես ՀՕԿ-ի որոշակի գործունեության արտացոլումը սփյուռքահայ մամուլում, ինչն իրենից մեծ կարևորություն է ներկայացնում հատկապես ՀՕԿ-ի և հայ ավանդական կուսակցությունների փոխհարաբերությունների խնդիրը ճիշտ լուսաբանելու հարցում:

Հատկապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում ՀՕԿ-ի և սփյուռքահայ այլ հասարակական կազմակերպությունների փոխհարաբերությունների խնդիրը:

Էդուարդ Մելքոնյանը 1999թ. հրատարակած «Հայկական բարեգործական ընդհանուր միությունը Խորհրդային Հայաստանում 1923-1937 թթ.»

¹ Տես Մելիքսեթյան Հ., Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը 1920-1980 թթ., Երևան, 1985:

² Տես Դալլաքյան Կ., Ռամկավար ազատական կուսակցության պատմություն, Երևան, 1999:

³ Տես Դալլաքյան Կ., Ակնարկներ սփյուռքահայ հասարակական մտքի պատմության, Երևան, 1994:

աշխատությունում¹ ՅՕԿ-ի խնդրին անդրադարձել է ՅԲԸՄ-ի և խորհրդային իշխանությունների հարաբերությունների տեսանկյունից՝ լուսաբանելով նաև ՅՕԿ-ի շինարարական գործունեությունը:

Առավել արժեքավոր է Է. Մելքոնյանի մեկ այլ՝ 2005թ. տպագրած «Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն» մեծածավալ մենագրությունը², որն ընդգրկում է ՅԲԸՄ-ի ծավալած ողջ գործունեության՝ հատկապես հայաստանյան շրջանը: Աշխատությունում մանրամասն ներկայացված է 1920-1930-ական թվականների խորհրդային Հայաստանի ներքաղաքական իրավիճակը, ՅԲԸՄ-ի մասնակցությունը հայրենադարձության կազմակերպչական աշխատանքներին և այլն: Հեղինակն անդրադարձել է նաև ՅԲԸՄ-ի և ՅՕԿ-ի փոխհարաբերությունների խնդրին: Թեև այս հարցում Է. Մելքոնյանը բացասական վերաբերմունք ունի ՅՕԿ-ի նկատմամբ և քննադատել է մի շարք հեղինակների՝ հայրենադարձության կազմակերպման և խորհրդային Հայաստանում ծավալված շինարարական աշխատանքներում ՅՕԿ-ի դերը գերազնահատելու համար: Հեղինակը ՅՕԿ-ին հատկապես մեղադրում է խորհրդային Հայաստանում ՅԲԸՄ-ի կողմից իրականացվող շինարարական մի շարք աշխատանքները (խոսքը ավանների մասին է) իրեն վերագրելու մեջ³, որը, մեր կարծիքով, սխալ մոտեցում է:

Է. Մելքոնյանը ներկայացրել է, օրինակ, Նոր Եվրոկիայի կառուցման վերաբերյալ ՅԲԸՄ-ի և ՅՕԿ-ի միջև կնքված պայմանագիրը, որի համաձայն շինարարական աշխատանքների ղեկավարումը հանձնվում էր Հայաստանի օգնության կոմիտեին⁴: Խնդիրն այն էր, որ ՅՕԿ-ը տնօրինում էր այս կամ այն կազմակերպության տրանսպորտ զուլմարները, կազմակերպում և ղեկավարում էր խորհրդային Հայաստանում շինարարական աշխատանքները, որոնց համար հատկացումներ էր անում նաև իր միջոցներից:

Հայաստանի ազգային արխիվում պահվող փաստաթղթերի, ապա նաև մամուլի հիման վրա մեր հեղինակած ատենախոսությունում հստակ ներկայացված են այն բոլոր աշխատանքները, որ իրականացրել է ՅՕԿ-ն՝ այլ հասարակական կազմակերպությունների աջակցությամբ:

Է. Մելքոնյանը անդրադարձել է նաև ՅՕԿ-ի ղեկավարների և անդամների նկատմամբ ստալինյան բռնաճնշումների քաղաքականությանը, որը խնդրի լուսաբանման համար մեծ կարևորություն է ներկայացնում:

Հայրենադարձության հետ կապված խնդիրներն իրենց ուսումնասիրություններում, ինչպես նշեցինք, լուսաբանել են մի շարք պատմաբաններ՝ Հ. Մելիքսեթյանը, Կ. Դալլաքյանը, Է. Մելքոնյանը և ուրիշներ, սակայն այդ գործընթացներում «Հայաստանի օգնության կոմիտե» կազմակերպության ներգրավվածության աստիճանի, հայրենակցական միությունների հետ համագործակցության մասին դեռևս լիարժեք անդրադարձ չի կատարվել: Ուստի, կարևորելով այս հանգամանքը, ատենախոսությունում հիմնականում արխիվային վավերագրերի միջոցով, ներկայացվել և ընդգծվել է հայրենադարձության կազմակերպման գործում ՅՕԿ-ի կարևոր դերակատարման իրողությունը:

¹ Տես Մելքոնյան Է., Հայկական բարեգործական ընդհանուր միությունը խորհրդային Հայաստանում 1923-1937 թթ., Երևան, 1999:

² Տես Մելքոնյան Է., Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Երևան, 2005:

³ Տես նույն տեղում, էջ 218:

⁴ Տես նույն տեղում, էջ 180-181:

Սփյուռքահայության պատմության ուսումնասիրման համար անգնահատելի արժեք ունի 2006թ. ՀԲԸՄ-ի կենտրոնական վարչության կողմից Հարություն Ռ. Գևորգյանի և Վահե Թաշճյանի ղեկավարությամբ հրատարակված «Դար մը պատմութիւն Հայ բարեգործական ընդհանուր միութեան» երկհատոր աշխատությունը¹, ուր հատկապես օգտագործված են Փարիզի Մուբարյան գրադարանի արխիվի փաստաթղթերը: Առաջին հատորը կարևոր տեղեկություններ է ներկայացնում հատկապես հայրենադարձության կազմակերպման, ՀՕԿ-ի և ՀԲԸՄ-ի համագործակցության և մասնակցության, այդ գործընթացի նկատմամբ խորհրդային Հայաստանի իշխանությունների որդեգրած քաղաքականության վերաբերյալ, որը մեծապես նպաստել է ատենախոսության մեջ հիշյալ խնդիրներն օբյեկտիվորեն շարադրելուն:

Ատենախոսության շարադրմանը օգտակար են եղել նաև Կ. Դալլաքյանի^{2,3}, Հ. Թովուզյանի^{4,5}, Ա. Կունդակչեանի⁶, Ա. Մանուկյանի⁷, Ռ. Բաղդասարյանի⁸, Հովհ. Ալեքսանյանի⁹, Ս. Ավետիսյանի¹⁰ մենագրությունները, մենագրությունները, ինչպես նաև «Հայ Սփյուռք», հանրագիտարանը¹¹, Հայ օգնության միության հրատարակած «Հարիւրամեայ յուշամատեան Հայ օգնութեան միութեան (1910-2010)» խորագրով աշխատությունը¹² և այլն:

ՀՕԿ-ի Ֆրանսիայի մասնաճյուղի ստեղծման հետ կապված մանրամասները՝ կապված Ս. Պապաջանյանի գործունեության հետ, ով նաև ՀՕԿ-ի Ֆրանսիայի կենտրոնական վարչության նախագահն էր, առաջին անգամ ներկայացված են Գ. Ավագյանի՝ «Միքայել Պապաջանյանի հասարակական-քաղաքական գործունեությունը» խորագրով ատենախոսությունում¹³, որը բազմաթիվ նորահայտ վավերագրերի համակողմանի լուսաբանմամբ զգալի

¹ Տե՛ս Դար մը պատմութիւն Հայ բարեգործական ընդհանուր միութեան, հատոր առաջին, Կեդրոնական վարչութիւն, ղեկավարութեամբ Յարութիւն Ռ. Գեորգեանի եւ Վահէ Թաշճեանի, Գահիրէ-Փարիզ-Նիւ Եորք, 2006:

² Տե՛ս Դալլաքյան Կ., Հայ Սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ), Երևան, 2004:

³ Տե՛ս Դալլաքյան Կ., Հ. Բ. Ը. Նախագահ Գ. Կյուլպենկյանի հրաժարականի հարցի շուրջ, Երևան, 1996:

⁴ Տե՛ս Թովուզյան Հ. Խ., Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն (1805-1952), Երևան, 1978:

⁵ Տե՛ս Թովուզյան Հ. Խ., Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն, Երևան, 1986:

⁶ Տե՛ս Կունդակչեան Ա. Կ., Հայրենադարձների բռնաճնշումները ստալինյան ժամանակաշրջանում, Երևան, 2010:

⁷ Տե՛ս Մանուկյան Ա., Քաղաքական կյանքը Հայաստանում 1920-1940 թթ., Երևան, 2002:

⁸ Տե՛ս Багдасарян Р., Карен Микаэлян, Творчество и вклад в русско-армянские литературно-культурные взаимосвязи, Ереван, “Лингва”, 2010:

⁹ Տե՛ս Ալեքսանյան Հ. Ս., Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1917-1941 թթ., Երևան, 2011:

¹⁰ Տե՛ս Ավետիսյան Ս. Ռ., Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի (Ամերկոմ) գործունեությունը Հայաստանում 1918-1930 թթ., Երևան, 2009:

¹¹ «Հայ Սփյուռք» հանրագիտարան, խմբ. հանձնաժողով՝ Հ. Մ. Այվազյան և ուրիշներ, Երևան, 2003:

¹² Տե՛ս Հարիւրամեայ յուշամատեան Հայ օգնութեան միութեան (1910-2010), Պոսթոն, 2010:

¹³ Տե՛ս Ավագյան Գ., Միքայել Պապաջանյանի հասարակական-քաղաքական գործունեությունը, ատենախոսություն, Երևան, 2009, Ազգային գրադարան, ատենախոսությունների և սեղմագրերի բաժին, 07.000:

նպաստել է մեր աշխատանքում ՀՕԿ-ի Ֆրանսիայի մասնաճյուղի գործունեության այն հատվածի շարադրմանը, որն առնչվում է Ս. Պապաջանյանի պաշտոնավարման ժամանակահատվածին:

Այսպիսով, վերոնշյալ արխիվային ֆոնդերում պահվող արխիվային վավերագրերի, ինչպես նաև սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների մանրակրկիտ հետազոտության շնորհիվ հնարավոր է դարձել լուսաբանել Հայաստանի օգնության կոմիտեի հետ կապված հիմնահարցերը և ներկայացնել կոմիտեի ամբողջական գործունեությունը:

ԱՄԵՆԱԽՈՒՄՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆՊԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից և հավելվածից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 194 էջ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ հիմնավորված է թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ներկայացված է ատենախոսության գիտական նորույթը, հիմնավորված են հետազոտության ժամանակագրական սահմանները, տրվել է հիմնախնդրին վերաբերվող սկզբնաղբյուրների և առկա գրականության տեսությունը:

Առաջին գլուխը «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՏԵՂԾՈՒՄԸ և ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում «ՀՕԿ-ի ստեղծումը և մասնակցությունը Հայաստանի վերաշինությանը» ներկայացված է հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական ծանր դրությունը, ժողովրդին սովի ու համաճարակի, չքավորության ճիրաններից փրկելու համար հասարակական կազմակերպություն՝ ՀՕԿ ստեղծելու անհրաժեշտությունը, վերջինի կազմակերպչական գործընթացը, նպատակները, խնդիրները, մասնակցությունը սովի ու համաճարակի դեմ մղվող պայքարին և Խորհրդային Հայաստանի վերաշինությանը:

1920-ականների սկզբին բնակչության անմխիթար վիճակից մտահոգ մի շարք հասարակական գործիչներ, ականավոր մտավորականներ դիմում են ՀՍԽՖ ժողովրդական կոմիսարների խորհրդին՝ հասարակական մի կազմակերպություն՝ «Հայաստանի օգնության կոմիտե» ստեղծելու խնդրանքով, որը, նախևառաջ, պետք է միջոցներ հայթայթեր սովի ու համաճարակի ճիրաններից ժողովրդին փրկելու համար:

1921թ. սեպտեմբերի 15-ին ՀՍԽՖ ժողովոմխորին ընդունում է ՀՕԿ-ի մասին դեկրետ, որով թույլատրում է վերջինի գործունեությունը¹:

ՀՕԿ-ի կենտրոնական վարչության նախագահ է ընտրվում ՀՍԽՖ հողժողկոմ Ա. Երզնկյանը²: ՀՕԿ-ի գլխավոր վարչության առաջին պատվավոր նախագահը հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանն էր, ով, սակայն, բնակվելով Թիֆլիսում, հնարավորություն չունեի ստանձնելու ՀՕԿ-ի անմիջական ղեկավարությունը³: Սակայն Հովհ. Թումանյանն անմասն չի մնում կոմիտեի կազմակերպչական աշխատանքներից:

Կարևոր իրադարձություն էր 1923թ. հոկտեմբերի 14-19-ը գումարված ՀՕԿ-ի 3-րդ համագումարը, որին ներկա էին զանազան երկրների հայկական

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 39, գ. 33, ք. 85:

² Տե՛ս նույն տեղում, ֆ. 178, ց. 1, գ. 1, ք. 6:

³ Տե՛ս «ՀՕԿ», Ա տարի, թիւ 2, 1933, մարտ, Փարիզ, էջ 5:

համայնքներից ու կազմակերպություններից՝ ԲԲԸՄ, Ամերկոմ, Անգլկոմ և այլն¹: Սա Հայաստան-Սփյուռք համահայկական առաջին համաժողովն էր՝ կազմակերպված ԶՕԿ-ի կողմից:

ԶՕԿ-ի կենտրոնական վարչությունը Երևանում հիմնեց այնպիսի արհեստանոցներ, ուր պատրաստվում էին երկրի համար անհրաժեշտ պիտույքներ, մյուս կողմից աշխատանք հայթայթվեց հայրենիք վերադարձած արհեստավորներին ու որբերին²:

ԶՕԿ-ի ստեղծումը հայ ժողովրդի համար այդպիսի ծանր ժամանակահատվածում միանշանակ անհրաժեշտություն էր: ԶՕԿ-ի գլխավոր վարչությունը Խորհրդային Հայաստանում արդյունավետ աշխատանք կատարեց արտասահմանի հայերից ստացված օգնությունը տնօրինելու, ճիշտ բաշխելու ուղղությամբ՝ այդպիսով մասնակից դառնալով Հայաստանի չքավոր ազգաբնակչության կյանքի հետագա բարելավմանը:

Երկրորդ ենթազխում՝ «ԶՕԿ-ի դերը հայրենադարձության կազմակերպման գործում», լուսաբանվել է հայ գաղթականության դրությունը, վեր են հանվել այն բոլոր մանրամասները՝ կապված հայրենադարձության կազմակերպման, նոր ավանների կառուցման, ԶՕԿ-ի և հայրենակցական միությունների համագործակցության, աշխատատեղերի բացման հետ, որոնցով կարելի է վստահաբար պնդել կազմակերպության լուրջ ներդրումը այդ հայրենամյվեր գործին:

ԶՕԿ-ի կենտրոնական վարչության գործունեության ընթացքում թերևս ամենակարևոր աշխատանքը հայրենադարձության գործին աջակից դառնալն էր: ԶՕԿ-ն ամեն ջանք գործադրեց՝ մասնակից դառնալու հայրենադարձության կազմակերպչական աշխատանքներին և օժանդակելու այն անհատներին ու խմբերին, ովքեր ցանկություն էին հայտնել զալ ու բնակվել Հայաստանում³:

1920-ականների վերջերին և 1930-ական թվականների սկզբներին ԶՕԿ-ի վերահսկողությամբ հիմնադրվում են Նոր Արաբկիր, Նոր Մալաթիա Նոր Կեսարիա, Նոր Տիգրանակերտ, Նուբարաշեն, Նոր Քղի և այլ ավաններ⁴:

Թեև հայրենադարձները Խորհրդային Հայաստանի ծանր պայմանները տեսնելով՝ խիստ հիասթափվել էին, այնուամենայնիվ հայրենադարձության շնորհիվ հայրենիքում հաստատվեցին տասնյակ հազարավոր բանիմաց և կարող ուժեր, որոնք հետագայում իրենց մասնակցությունը բերեցին Հայաստանի տնտեսական և մշակութային կյանքի առաջընթացին:

Երրորդ ենթազխում՝ «ԶՕԿ-ի լուծարումը ՂՍԽԳ-ում» անդրադարձ է կատարված 1930-ական թվականներին ԽՍՀՄ-ում տեղ գտած բռնաճնշումներին, որոնք իրենց հետևանքներն ունեցան նաև Խորհրդային Հայաստանի և Խորհրդահայ հասարակության վրա: 1930-ական թվականների կեսերից սկսվեցին հասարակական տարբեր խավերի ներկայացուցիչների, հատկապես պետական և կուսակցական գործիչների, մտավորականների բռնադատումները, որից անմասն չէին կարող մնալ նաև ԶՕԿ-ի ղեկավար անդամները: Ներկայացվել է նաև ՂՍԽԳ-ում ԶՕԿ-ի լուծարման գործընթացը՝ հասցնելով մինչև 1937թ. դեկտեմբերի 3-ը, քանի որ արտասահմանում՝

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 80, քթ. 2-3, 74:

² Տե՛ս «Խորհրդային Հայաստան», № 178, 7 օգոստոսի 1925թ., էջ 3:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 165, ք. 9:

⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 777, ք. 1, գ. 798, քթ. 6, 8, 9, 11:

մասնավորապես ԱՄՆ-ում ԶՕԿ-ի մասնաճյուղերը գործել են մինչև 1938թ. մայիս:

Հայաստանի իշխանությունները Անդրերկրյան անմիջական ղեկավարությամբ ձեռնամուխ են լինում շինծու հակահեղափոխական կազմակերպությունների անդամների ձերբակալություններին և բռնաճնշումների միջոցով կորզում նրանցից հակահեղափոխական, ազգայնական գործունեության մասին ցուցմունքներ¹:

ՀՍԽՅ ժողովմխորհն, արդեն աննպատակահարմար գտնելով ԶՕԿ-ի հետագա գործունեությունը, 1937թ. դեկտեմբերի 3-ին որոշում է կայացնում Հայաստանի օգնության կոմիտեն լուծարելու մասին²:

Լուծարքային հանձնաժողովի 1937թ. դեկտեմբերի 13-ի կազմած ակտում նշվում է, որ ԶՕԿ-ն իր գոյության ընթացքում արտասահմանից տարբեր հայրենակցական միությունների և անհատների նվիրատվությունների և հանգանակությունների միջոցով ստացել էր 17.603 ֆ. ստ., 192.254 դոլար, 172.581 ֆրանսիական ֆրանկ գումար, որը հավասար էր 586.428 ռուբլու՝ ոսկով³:

երկրորդ գլուխը՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՍԱՆՆԱՃՅՈՒՂԵՐԻ ՄՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ» բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «ԶՕԿ-ի մասնաճյուղերն Անդրկովկասում» լուսաբանվել է Անդրկովկասում ԶՕԿ-ի մասնաճյուղերի ստեղծման գործընթացը, կատարված աշխատանքները, ընդգծվել է մասնավորապես ԶՕԿ-ի Թիֆլիսի և Բաթումի մասնաճյուղերի կարևոր դերակատարության հանգամանքը արտասահմանից ստացված նյութական օգնությունը խորհրդային Հայաստան փոխադրելու, հայ գաղթականներին ժամանակավոր կացարաններով ապահովելու և հայրենադարձության գործընթացին աջակցելու տեսանկյունից:

Հայ ժողովուրդը բազմաթիվ սոցիալ-տնտեսական, քաղաքական խնդիրների պատճառով, ինչպես նաև անբարեհաճ ճակատագրի արդյունքում դարեր շարունակ ապրել և ստեղծագործել է հայրենիքից դուրս՝ իր կարողությունները ներդնելով այլ երկրների ու ժողովուրդների կյանքի առաջընթացին: Հայերը մեծ կշիռ ունեին և կարևոր դերակատարություն էին ստանձնել հատկապես Անդրկովկասի զանազան քաղաքներում՝ մասնավորապես Թիֆլիսում, Բաքվում, Բաթումում: Բազմաթիվ անվանի հայ մտավորականներ բնակվում էին Թիֆլիսում:

Զանազան վայրերից՝ հատկապես Յյուսիսային Կովկասից Հայաստան անցնելու համար հայ գաղթականները գալիս էին Թիֆլիս: Վերջինները ժամանակավոր ապաստան էին գտնում եկեղեցիների բակում՝ անճրկի ու արևի տակ: Զանազան հիվանդությունների հետևանքով տեղի էին ունենում մահացության բազմաթիվ դեպքեր: ԶՕԿ-ի Թիֆլիսի մասնաճյուղն իր վրա է վերցնում այդ գաղթականների հոգատարությունը՝ տալով նրանց սնունդ և բժշկական օգնություն⁴:

¹ Տե՛ս Մելքոնյան Է., Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, էջ 284-285:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, գ. 4, զ. 10902, ք. 4:

³ Տե՛ս նույն տեղում, գ. 17, զ. 76, ք. 109, 131:

⁴ Տե՛ս նույն տեղում, ֆ. 178, գ. 1, զ. 152, ք. 19:

1922թ. գարնանից ՅՕԿ-ի Բաթունի մասնաճյուղի կողմից սկսվել էր հայ գաղթականների ցուցակագրումը (1500 ընտանիք՝ շուրջ 5000 հոգի), բայց այդ գործընթացը դանդաղում էր, քանի որ վերջիններս խուսափում էին ցուցակագրվել¹:

ՅՕԿ-ի Բաքվի մասնաճյուղը իր հերթին Հայաստանի ազգաբնակչությանը օգնելու նպատակով կազմակերպում էր զանազան միջոցառումներ², սակայն գործունեությունն անարդյունավետ էր:

1925թ. հուլիսի 23-ին ՅՕԿ-ի կենտրոնական վարչությունը որոշում է կայացնում ՅՕԿ-ի անդրկովկասյան ճյուղերի փակելու մասին³:

Թեև ՀԿ(Բ)Կ կենտկոմի և ՅՕԿ-ի նախագայության կողմից Բաքվի մասնաճյուղի փակման վերաբերյալ կայացված որոշումը բխում էր վերջինի ցանկությունից և անգործության պատճառով արդեն դրված էր ինքնալուծարման խնդիրը, սակայն այդ որոշումն անընդունելի էր ՅՕԿ-ի Թիֆլիսի և Բաթունի մասնաճյուղերի համար, քանի որ վերջինները ակտիվ և արդյունավետ գործունեություն էին ծավալում:

Երկրորդ ենթազվխում՝ «ՅՕԿ-ի մասնաճյուղերի ստեղծումը և գործունեությունը Խորհրդային Ռուսաստանում ու այլ խորհրդային հանրապետություններում» հանգամանորեն ներկայացված են՝ հիմնականում արխիվային վավերագրերի հիման վրա, խորհրդային հանրապետությունների ՅՕԿ-ի գրեթե բոլոր մասնաճյուղերը: Ռուսաստանի հայկական համայնքները մինչխորհրդային շրջանում կարևոր դերակատարություն ունեին: Սակայն խորհրդային իշխանության հաստատմամբ ամմիջապես սկսեց անտեսվել ազգային գործոնը: Խորհրդային Հայաստանի սովյալ ազգաբնակչությանը օգնելու նպատակով ստեղծված ՅՕԿ-ին, սակայն, խորհրդային ղեկավարությունը թույլատրում է գործել նաև խորհրդային այլ հանրապետություններում:

ՅՕԿ-ի Մոսկվայի մասնաճյուղը հիմնադրվում է 1922թ. փետրվարի 26-ին⁴: Այն մեծ աշխատանք է կատարում Խորհրդային Հայաստանի անապաստան ու որբ երեխաներին օգնություն հասցնելու գործում⁵:

ՌՍՖՍՀ-ում հատկապես մեծ աշխատանք է կատարել ՅՕԿ-ի Նովոռոսիյսկի մասնաճյուղը՝ մասնավորապես Թուրքիայից փախած հայ գաղթականներին առաջին անհրաժեշտ օգնություն ցույց տալու հարցում, որոնք ճանապարհին մինչև վերջին թելը թալանվել էր ծովահենների՝ թուրք նավաստիների կողմից: ՅՕԿ-ի Նովոռոսիյսկի մասնաճյուղի աջակցությամբ գաղթականները տեղավորվում են և աշխատանքի անցնում Սևծովյան շրջանի ծխախոտի պլանտացիաներում⁶:

ՅՕԿ-ը որոշակի ակտիվություն է ցուցաբերում նաև Ուկրաինայում՝ հատկապես Խարկովում⁷, ինչպես նաև մասնաճյուղեր են ստեղծվում Միջին Ասիայում, ուր կար հայկական հոծ բնակչություն:

¹ Տե՛ս նույն տեղում, գ. 295, թթ. 46, 47 շրջ, 48:

² Տե՛ս նույն տեղում, գ. 109, թ. 89:

³ Տե՛ս նույն տեղում, գ. 127, թ. 6:

⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 15, թ. 1:

⁵ Տե՛ս „Возрождающаяся Армения”, № 1, 1926 г., с. 21:

⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 306, թ. 20 և շրջ.:

⁷ Տե՛ս նույն տեղում, թ. 18 և շրջ.:

Հայաստանի հարևան և հարակից խորհրդային այլ հանրապետություններում ստեղծված ՅՕԿ-ի մասնաճյուղերը սկզբնական շրջանում, քանի դեռ կազմավորված չէին ՅՕԿ-ի արտասահմանյան մասնաճյուղերը, մեծ ներդրում ունեցան սովահար հայ ազգաբնակչության փրկելու գործում: Նրանք ոչ միայն միջոցներ էին ուղարկում խորհրդային Հայաստան, այլև ունեին տեղական կարևոր նշանակություն:

Երրորդ գլուխը՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆ ԼՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՓՅՈՒՌՔԱՅ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ» բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Պարսկաստան, Մերձավոր Արևելքի երկրներ և Հնդկաստան» ներկայացված է հիշյալ երկրներում ՅՕԿ-ի մասնաճյուղերի կազմակերպչական գործընթացը, ինչպես նաև քննության է առնված ՀԿ(Բ)Կ կենտկոմի որդեգրած գործելաոճը արտասահմանի հայության նկատմամբ և հատկապես ՅՕԿ-ի և Սփյուռքի հայ ավանդական կուսակցությունների փոխհարաբերությունները:

ՅՕԿ-ի արտասահմանյան գործունեությունը սկիզբ է դրվում հարևան Պարսկաստանից, որտեղ բազմահազարանոց հայ համայնք գոյություն ուներ: Առաջին հերթին ՅՕԿ-ի մասնաճյուղ ստեղծվում է Թեհրանում՝ 1922թ. փետրվարի 5-ին¹, ապա նաև Թավրիզում²: ՅՕԿ-ի Թավրիզի մասնաճյուղը մեծ ուշադրություն էր դարձնում գաղթականության խնդրին³:

Պարսկաստանում ՅՕԿ-ը ծավալում էր որոշակի քաղաքական գործունեություն, որը համահունչ էր խորհրդային իշխանության շահերին: Սակայն ՅՕԿ-ի քայլերն այդ ուղղությամբ շատ դեպքերում չէին բավարարում վերջիններին: Այդ առումով ՀԿԿ կենտկոմի քարտուղար Ա. Հովհաննիսյանը 1925թ. մարտի 24-ին ՌԿԿ Անդրերկրյան մասնուկի ենթաբաժնի վարիչին ուղղած գրությունում կարևոր է համարում Թավրիզում խորհրդային կողմնորոշման անկուսակցական թերթի հրատարակումը: Այն պետք է ծառայեր խորհրդային քարոզչությանն՝ ընդդեմ դաշնակցականների⁴:

ՅՕԿ-ը գործունեություն է ծավալում նաև Մերձավոր Արևելքի երկրներում, քանի որ այնտեղ գոյություն ունեին տասնյակ հազարավոր հայկական համայնքներ:

Սիրիայում, Լիբանանում և Եգիպտոսում հայ ավանդական կուսակցությունների միջև կատաղի պայքար էր ընթանում, որն էլ լարված մթնոլորտում էր պահում տեղի հայկական համայնքները: Նման համայնքներում տեղին էր ՅՕԿ-ի մասնաճյուղերի ստեղծումը՝ հատկապես Հայրենիք-Սփյուռք կապերն ամրապնդելու տեսանկյունից, բայց ոչ համապատասխան կուսակցությունների շահերին: Մերձավոր Արևելքի երկրներում մեծ ազդեցություն ունեին ռամկավարները և հատկապես դաշնակցականները: Սակայն ոչ բոլոր սփյուռքահայերն էին կուսակցականացված, և ՅՕԿ-ը, հենվելով այդ զանգվածի վրա, փորձում էր Սփյուռքում բարձրացնել հայրենիքի հեղինակությունը, որի անհրաժեշտությունը, մինչև այժմ էլ նկատվում է:

Արտասահմանում, հայության շրջանում պետք է գործեն միայն հասարակական, բարեգործական և նմանատիպ այլ կազմակերպություններ, այլ

¹ Տես նույն տեղում, գ. 44, թ. 1:

² Տես նույն տեղում, գ. 1, թ. 40-42:

³ Տես նույն տեղում, ֆ. 113, գ. 3, գ. 362, թ. 77, 75:

⁴ Դ. Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը, էջ 305:

ոչ թե չգրանցված և տվյալ երկրների քաղաքական ընտրություններին չմասնակցող հայկական կուսակցություններ, որոնք մինևույն ժամանակ փորձեր են կատարում ճնշել անկախ Հայաստանի արտաքին քաղաքական կողմնորոշմանը:

Երկրորդ ենթագլխում՝ «Արևմտյան Եվրոպա և Բալկանյան երկրներ» վեր են հանված հիշյալ երկրներում Հայաստանի օգնության կոմիտեի գործունեության հետ կապված մանրամասները, որի համատեքստում քննվել է նաև սփյուռքահայ կուսակցությունների հետ վերջինի առնչությունների հարցը, ներկայացվել է նրանց որդեգրած դիրքորոշումը Խորհրդային Հայաստանի հանդեպ:

ՀՕԿ-ի Եվրոպայի մասնաճյուղերը սկզբնական շրջանում ակտիվ գործունեություն էին ծավալում: Մի շարք մասնաճյուղեր գործազրկության և մի շարք այլ տնտեսական պատճառներով ժամանակի ընթացքում կազմալուծվում են, իսկ անդամներից շատերը մեկնում են Խորհրդային Հայաստան՝ հայրենադարձության Ա, Բ, Գ խմբերով¹: Սակայն հետագայում արտասահման գործուղված ՀՕԿ-ի պատվիրակությունների շնորհիվ աշխուժանում է ՀՕԿ-ի մասնաճյուղերի գործունեությունը և վերջինները մասնակցում են հայրենիքի վերաշինությանը:

Սկզբնական շրջանում ՈւԿԿ-ը Ֆրանսիայում ՀՕԿ-ի մասնաճյուղեր ստեղծելու գործում մեծ աջակցություն էր ցույց տալիս²: Սակայն, հետզհետե, կարծիքը փոխվում է և արտասահմանի կուսակցական, ինչպես նաև Խորհրդային մամուլն օգտագործվում էր այս կամ այն ուժերին վարկաբեկելու համար³:

Ֆրանսիայում ՀՕԿ-ի մասնաճյուղերի գործունեության ակտիվության հետ միասին առավել սրվել էին հարաբերությունները Հայ հեղափոխական դաշնակցության հետ, որի արդյունքը 1933թ փետրվարի 26-ին Գրենոբլում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունն էր, երբ դաշնակցական ծայրահեղ երիտասարդները հարձակվում են ՀՕԿ-ի անդամների վրա և սպանում են Մ. Մարուքյանին⁴:

Հայաստանի օգնության կոմիտեի մասնաճյուղեր էին ստեղծվել նաև Բեռլինում⁵ Ավստրիայում, որը կրկին դաշնակցականների շնորհիվ չկարողացավ գործունեություն ծավալել⁶, ինչպես նաև Լոնդոնում⁷:

ՀՕԿ-ն իր մասնաճյուղերը կազմակերպեց նաև Բալկանյան երկրներում՝ Հունաստանում, Բուլղարիայում և Ռումինիայում, ուր ևս տեղահանված հայությունն իր ապաստանն էր գտել:

ՀՕԿ-ի մասնաճյուղերն արտասահմանում կազմակերպում էին այնպիսի միջոցառումներ, որոնցից միայն ու միայն ամրապնդվում էին ներհամայնքային կապերը, սփյուռքահայության մեջ առաջանում էր հայրենիք վերադառնալու ձգտում, որն, այնուհետև, իրականություն էր դառնում:

¹ Տե՛ս «Շինարար», թիւ 4, 1931թ., Ելու-Յորք, էջ 62:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 424, ց. 4, գ. 7, թ. 26 շրջ.:

³ Տե՛ս Դալլաքյան Կ., Ռամկավար Ազատական կուսակցության պատմություն, էջ 141:

⁴ «ՀՕԿ», թիւ 2, 1933թ. մարտ, Փարիզ, էջ 56-58:

⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 408, թ. 2 և շրջ.:

⁶ Տե՛ս «Հայրենիք», (օրաթերթ), թիւ 4220, 19 մարտի 1926թ., Բոստոն, էջ 3:

⁷ Տե՛ս «Հրավիրակ», N 1, 1925, էջ 20:

երրորդ ենթագլխում՝ «Հյուսիսային և Հարավային Ամերիկաների երկրներ» ներկայացվել է հիշյալ երկրներում ՀՕԿ-ի մասնաճյուղերի գործունեությունը և կրկին անդրադարձ է կատարվել ՀՕԿ-ի և արտասահմանի հայ ավանդական կուսակցությունների փոխհարաբերությունների խնդրին, որոնք իրենց անհանդուրժողական դրսևորումներով խաթարում էին և՛ ներհամայնքային, և՛ Հայրենիք-Սփյուռք կապերը:

ԱՄՆ-ում մեծ ազդեցություն ունեին հնչակյանները, որոնք որոշակի հարաբերություններ ունեին նաև ՀՕԿ-ի հետ: Սակայն ժամանակի ընթացքում հնչակյանները կապը խզեցին ՀՕԿ-ի հետ:

1920-ականների կեսերին ՀՕԿ-ն իր մասնաճյուղերն ուներ նաև Հարավային Ամերիկայում, որոնց կենտրոնը Բուենոս-Այրեսն էր¹:

ՀՕԿ-ի արտասահմանյան գործունեության արդյունքում Խորհրդային Հայաստանում բազմաթիվ խոշորածավալ ձեռնարկներ կյանքի կոչվեցին, որոնք անհնարին կլիներին առանց սփյուռքահայ զանազան կազմակերպությունների, այդ թվում՝ բազմաթիվ կուսակցական գործիչների աջակցության:

ԵՋՐՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ի մի են բերված ատենախոսության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները:

Թեմայի ուսումնասիրությունը մեզ թույլ է տալիս կատարել հետևյալ եզրակացությունները.

1. Հայաստանի սովյալ ազգաբնակչությանը օգնելու նպատակով ստեղծված Հայաստանի օգնության կոմիտեն իր գործունեության ընթացքում ծավալեց և՛ հասարակական, և՛ քաղաքական գործունեություն, որը խորհրդահայ հասարակության և սփյուռքահայության կյանքում ու մտածողության մեջ ունեցավ ինչպես դրական արդյունք, այնպես էլ բացասական անդրադարձ:

2. ՀՕԿ-ն առաջին հերթին մասնաճյուղեր բացեց խորհրդային հանրապետություններում՝ Վրաստանում, Ադրբեջանում, Խորհրդային Ռուսաստանում և այլուր, որն, իհարկե, չէր կարող իրականացվել առանց խորհրդային ղեկավարության իմացության և թողտվության: Այդ փաստն ապացուցում է, որ ՀՕԿ-ն, իրոք, սկզբնական շրջանում ստեղծվել էր հայ ազգաբնակչության օգնության գործը կազմակերպելու նպատակով, իսկ խորհրդային իշխանությունը երկրի սոցիալ-տնտեսական այդպիսի ծանր ժամանակահատվածում, բնականաբար, չէր կարող մտածել խորհրդային լայն գաղափարների քարոզչության մասին: Խորհրդային հանրապետություններում ստեղծված ՀՕԿ-ի մասնաճյուղերն օգնություն էին ուղարկում (թեև աննշան) ոչ միայն Խորհրդային Հայաստան, այլև ունեին նաև տեղական կարևոր նշանակություն: Սովը մոլեգնում էր ԽՍՀՄ ողջ տարածքով, իսկ հայ ազգաբնակչությունն ապրում էր չքավորության պայմաններում, ուստի խորհրդային հանրապետությունների ՀՕԿ-ի մասնաճյուղերը հոգում էին նաև տեղի հայ համայնքների կարիքները: Երբ ԽՍՀՄ-ում սովն ու համաճարակը հետզհետե սկսեցին նահանջել, ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունն իր ողջ ուշադրությունը բևեռեց Սփյուռքում գործունեություն ծավալելուն:

3. Խորհրդային Հայաստանի սովյալ ազգաբնակչությանն օգնելու համար, ինչպես նաև քարոզչության նպատակով ՀՕԿ-ը խորհրդային հանրապետություններ և արտասահման գործուղեց տարբեր անհատների և չորս պատվիրակություն: Հարկ ենք համարում շեշտել, որ առաջին պատգա-

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 446, ք. 6-17:

նավորությունը (ՅՈՒՆ. Թունանյան և Ե. Թաղիանոսյան), որ ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը ուղարկեց Կոստանդնուպոլիս, բեկում մտցրեց գաղութահայության տրամադրությունների մեջ: Կենդանի կապ հաստատվեց նաև Կոստանդնուպոլսի Հայրենիքի օգնության մարմնի (ՀՕՍ) հետ, որի միջոցով էլ հնարավոր դարձավ Հայաստան փոխադրել արտասահմանի զանազան հայկական կազմակերպություններից ու անհատներից ուղարկված օգնությունը: Արտասահմանում հսկայական աշխատանք կատարեց 1925թ. հոկտեմբերի 17-ին արտասահման գործուղված ՀՕԿ-ի պատվիրակությունը (Գր. Վարդանյան, Կ. Միքայելյան և Ս. Կամսարական): ՀՕԿ-ի այս պատվիրակությունը, որ հանձնարարական ուներ նաև սփյուռքահայության շրջանում քարոզչություն կատարել խորհրդային Հայաստանի օգտին՝ վերջիններիս մեջ սերմանեց այն գաղափարը, որը հայ ժողովրդի համար միակ հայրենիքը տվյալ պահին խորհրդային Հայաստանն է: Կարող ենք անվերապահորեն պնդել, որ արտասահման գործուղված ՀՕԿ-ի պատվիրակությունները լայն քարոզչություն կատարեցին խորհրդային Հայաստանում ձեռնարկված շինարարական խոշոր ծրագրերի ժողովրդականացման և արտասահմանի հայության նյութական մասնակցության ապահովման ուղղությամբ:

4. Արխիվային բազմաթիվ վավերագրերի քննությունից հանգել ենք այն եզրահանգման նաև, որ ՀՕԿ-ը խորհրդային Հայաստանում ստեղծված առաջին կազմակերպությունն էր, որ աշխարհի տարբեր անկյուններում՝ Եվրոպայում, Հյուսիսային և Հարավային Ամերիկաներում, Մերձավոր Արևելքում բնակություն հաստատած հայությանը՝ հատկապես չկուսակցականացված աշխատավոր հայ հասարակությանը, ինչու չէ նաև հազարավոր սփյուռքահայ կուսակցականների, թեև խարխուլ թելերով, այնուամենայնիվ, կապեց հայրենիքի հետ, որը հետագա տասնամյակներում ավելի ամրապնդվեց: Այս տեսանկյունից մեծ կարևորություն է ներկայացնում 1923թ. հոկտեմբերի 14-19-ը երևանում կայացած ՀՕԿ-ի 3-րդ համագումարը, որին մասնակցել են ինչպես խորհրդային հանրապետությունների, այնպես էլ արտասահմանի՝ Լոնդոնի, Փարիզի, Բելգիայի, Գերմանիայի, Շվեյցարիայի հայ համայնքների և կազմակերպությունների՝ ՀԲԸՄ-ի, Ամերկոմի, Անգլկոմի ներկայացուցիչները: Այն ՀՕԿ-ի միջոցով կազմակերպված, պետական մակարդակի հասցված առաջին լուրջ շփումն էր Սփյուռքի հետ: Սա կարելի է համարել խորհրդային Հայաստան-Սփյուռք առաջին համահայկական խորհրդակցությունը, որի նպատակը հայրենիքի բարեկեցության ապահովման խնդիրն էր:

5. խորհրդային իշխանությունն իր գոյության ողջ ընթացքում տարածայնություններ ուներ հոգևորականության հետ: ԽՍՀՄ-ում ազգային հանրապետությունների պաշտոնական դավանանքները հետին պլան էին մղվել, իսկ հասարակությունը դաստիարակվում էր աթեիստական գաղափարներով: Խորհրդային Հայաստանի ղեկավարության որդեգրած դիրքորոշումից չչեղվելու պատճառով ՀՕԿ-ի աշխատանքներին չհրավիրեցին մասնակցել Ամենայն հայոց կաթողիկոսին, ինչը կարող էր մեծապես նպաստել ՀՕԿ-ի հեղինակության բարձրացմանը թե՛ Հայաստանում, թե՛ արտասահմանի հայկական շրջանակներում: Գիշտ քաղաքականություն չմշակվեց նաև Սփյուռքի հայ հոգևորականության ներգրավվածությունը ՀՕԿ-ի արտասահմանյան մասնաճյուղերի գործունեության մեջ ապահովելու ուղղությամբ, ինչն էլ ավելի արդյունավետ կդարձներ զանազան ձեռնարկների իրականացումը:

6. Թեմայի ուսումնասիրությունը մեզ հանգեցրել է նաև այն եզրակացության, որ ՀՕԿ-ի թերևս ամենաազգանվեր գործը հայրենադարձության գործընթացին աջակցելն էր: Խորհրդային կառավարությունը հնարավորություն չուներ կազմակերպել զանգվածային հայրենադարձություն: Հայաստանն ուներ բնակարանների խիստ պակաս, սակավաթիվ հողատարածություններ: Դրա համար անհրաժեշտ էին հսկայական ֆինանսական միջոցներ: ՀՕԿ-ի դերը հսկայական էր հայրենադարձների տեղափոխման, բնակեցման, աշխատատեղեր ստեղծելու գործում: Լոզանի կոնֆերանսից հետո, երբ հոդս ցնդեցին զաղթական դարձած հայության հայրենիք ունենալու ամենամվիրական երազանքները, արտասահմանի հայկական կազմակերպությունները, կուսակցությունները, զանազան անհատներ սկսեցին հայրենադարձության ուղիներ որոնել դեպի Խորհրդային Հայաստան: ՀՕԿ-ի արտասահմանյան մասնաճյուղերն իրենց համազունարների և պատգամավորական ժողովների օրակարգ էին դարձրել ներգաղթի խնդիրը և ամեն կերպ աջակցեցին և ղեկավարեցին այդ գործընթացը:

7. ՀՕԿ-ը հարաբերություններ հաստատեց զանազան սփյուռքահայ կազմակերպությունների հետ: Բանակցելով ՀԲԸՄ-ի ներկայացուցիչների հետ՝ արդյունքում արտասահմանում կուտակված և վերջինի տնօրինությանն անցած զանազան կտակներն ու ֆոնդերը օգտագործվեցին Հայաստանում: Նոր հարթության վրա դրվեցին ՀՕԿ-հայրենակցական միություններ առնչությունները: Համազործակցելով արտասահմանի հայկական հայրենակցական միությունների, ՀԲԸՄ-ի և այլ կազմակերպությունների հետ՝ ՀՕԿ-ը գլխավորեց Հայաստանում նոր ավանների շինարարական աշխատանքները, որի արդյունքում հիմնադրվեցին բազմաթիվ բնակավայրեր: ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը հայրենադարձվածներին՝ հատկապես որբերին, աշխատանքով ապահովելու համար բացեց զանազան արհեստանոցներ, որոնք վերջիններիս համար ունեին կենսական նշանակություն:

8. ՀՕԿ-ն արտասահմանում գործունեություն ծավալելու ընթացքում, բնականաբար, պետք է բախվեր սփյուռքահայ կուսակցությունների և կազմակերպությունների հետ և հաշվի նստեր նրանց շահերի հետ: Սկզբնական շրջանում Ռամկավար ազատական և Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունների ներկայացուցիչներն արտասահմանի շատ վայրերում աջակցում էին ՀՕԿ-ին մասնաճյուղեր կազմակերպելու գործում: ՀՕԿ-ի վերաբերմունքը վերջինների նկատմամբ՝ բացի ՀՀԴ-ից, որոշակի լոյալ էր, քանի որ նրանց միջոցով հսկայական նյութական միջոցներ էին ուղղվում Հայաստան: Հետագայում, երբ սովն ու համաճարակը սկսեցին նահանջել, Խորհրդային Հայաստանի կառավարությունը սկսեց լիարժեք օգտագործել իր պետական գործառույթները, այդ թվում՝ օգտագործելով ՀՕԿ-ի հնարավորություններն ու հեղինակությունը: ՀՕԿ-ը սկսեց ավելի ակտիվ գործել՝ ընդլայնելով արտասահմանյան մասնաճյուղերի ցանցն ու աշխարհագրությունը, ինչը դրական չէր դիտվում սփյուռքահայ կուսակցությունների կողմից: Խորհրդային իշխանությունները ՀՕԿ-ի հեղինակությունը սկսեցին օգտագործել իրենց կուսակցական շահերին համապատասխան, որոնք իրականացնելու համար մոռացության տրվեցին բազմաթիվ ազգային շահեր: Մի շարք կուսակցական ուսումնասիրողներ, թերևս ոչ իրատեսական, բացասական միտում են տեսնում Սփյուռքում Խորհրդային Հայաստանի հեղինակության բարձրացման հարցում ՀՕԿ-ի քաղաքականության մեջ, սակայն, այն դիտարկելով պետականության ամրապնդման տեսանկյունից,

միանգամայն արդարացված կարելի է համարել: Սփյուռքահայ կուսակցությունները և կազմակերպությունները սկսեցին ՀՕԿ-ը նույնացնել խորհրդային իշխանության հետ և հետզհետե հեռացան վերջինից: Իսկ ՀՀԳ-ն, չհաշտվելով Հայաստանի իշխանափոխության փաստի հետ, ի սկզբանե, ամենուր բոյկոտում էր ՀՕԿ-ի զանազան ձեռնարկները, որի արդյունքում տեղի ունեցան բազմաթիվ ողբերգական իրադարձություններ, ինչի պատճառ որոշ դեպքերում դարձան նաև ՀՕԿ-ի անդամները: Բայց այդ միջադեպերի հիմնական հրահրողը ՀՀԳ-ի ծայրահեղական թևն էր: Իսկ այդ գործողություններից տուժում էին միայն ու միայն հայ ժողովուրդը և հայոց պետականությունը: Սփյուռքահայ կուսակցություններն ու կազմակերպություններն, անկախ ՀՕԿ-ի հետ հարաբերություններից ու առնչությունից, հայրենիքին օգնելու, պետականության ամրապնդման համար պետք է ընտրեին յուրովի ճանապարհ:

9. Թեմայի ամբողջական ուսումնասիրությունը մեզ հանգեցրել է այն կարևոր եզրակացության, որ ՀՕԿ-ի գործունեության մեջ որոշակի քաղաքական միտվածությունն ամենևին չի նսեմացնում նրա գործունեության իրական արդյունքը: ՀՕԿ-ը հսկայական աշխատանք կատարեց խորհրդային Հայաստանի ազգաբնակչությանը սովի ու համաճարակի ճիրաններից փրկելու, երկրաշարժերից տուժածներին օգնություն հասցնելու, աղետի հետևանքները վերացնելու և Հայաստանի վերաշինությանը մասնակցելու գործում: Անկախ ՀՕԿ-ի արտասահմանյան ճյուղերի՝ իրենց գործունեության ընթացքում կատարած կուսակցական համընդարարականներից, ՀՕԿ-ը սփյուռքահայության կյանքին մեծ ակտիվություն հաղորդեց՝ թեկուզ հենց ձեռնարկած հանգանակությունների, կազմակերպած երեկույթների, մշակութային և մարզական այլ միջոցառումների շնորհիվ: Գաղտնիք չէր, որ Սփյուռքում շատ-շատերը ՀՕԿ-ի միջոցով էին տեղեկություններ ստանում և նույնիսկ գաղափար կազմում խորհրդային Հայաստանի մասին: Բացի այդ, Հայաստան փոխադրվեցին հսկայական գումարներ և նյութական օժանդակություն:

10. Ամփոփելով ՀՕԿ-ի գործունեության ուսումնասիրությունը՝ հարկ է նշել, որ ՀՍԽՀ ժողկոմխորհը լուծարեց Հայաստանի օգնության կոմիտեն, քանի որ արտասահմանի հետ կապը սառեցվում էր:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Փաստաթղթեր Հայաստանի օգնության կոմիտեի գործունեության վերաբերյալ (փաստաթղթերի հավաքածու), Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան, 2008, N 2, էջ 99-108:
2. Հայաստանի օգնության կոմիտեի մասնաճյուղերի ստեղծումը 1921-1922 թթ., Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան, 2009, N 1, էջ 146-154:
3. Հայաստանի օգնության կոմիտեի փոխհարաբերությունները սփյուռքահայ կուսակցությունների հետ, Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան, 2010, N 1, էջ 195-206:
4. Հայրենադարձությունը և ՀՕԿ-ը, «Հայ գաղթականությունը և Հայրենիք-Սփյուռք կապերը 1918-1985 թթ.», միջազգային գիտաժողովի զեկուցուներ, Երևան, 2011, էջ 110-120:

Макарян Лилит Асканазовна

Деятельность Комитета помощи Армении
(1921-1937 гг.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 “История Армении”

Защита состоится в 16-го декабря 2011 г. в 14⁰⁰ по адресу 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4, на заседании специализированного совета 004 при институте истории НАН РА.

РЕЗЮМЕ

Диссертация посвящена мало исследованной и актуальной теме – деятельности Комитета помощи Армении в 1921-1937 гг.

Диссертация состоит из введения, трех глав, заключений, списка использованных источников и литературы. Во введении обоснована актуальность, цели и задачи темы, представлена научная новизна, обоснованы хронологические рамки исследования, дана теория первоисточников и литературы, относящихся к проблеме.

В первой главе – “Создание и деятельность в Армении Комитета помощи Армении”, представлено социально-экономическое положение армянского народа, необходимость создания общественной организации Комитета помощи Армении, для спасения народа от голода, эпидемий и нищеты; исследуются также организационный процесс, цели, задачи Комитета, участие в преобразованиях в Советской Армении. Освещено положение армянских беженцев, подняты вопросы организации репатриации, сотрудничества между Комитетом и земляческими союзами. Показан серьезный вклад Комитета в патриотическое дело. Исследован также вопрос репрессий, имевших место в СССР в 1930-х годах, и которые оставили свой след на деятельности Комитета. Показано, что с начала 1930-годов начались репрессии представителей различных общественных слоев, в особенности государственных и партийных деятелей, интеллигенции, среди которых были и члены-руководители Комитета. В диссертации представлен процесс ликвидации Комитета помощи Армении в Армении – вплоть до 3 декабря 1937г; однако следует отметить, что зарубежом, в частности в США, филиалы Комитета действовали до мая 1938г.

Во второй главе – “Создание и деятельность филиалов Комитета помощи Армении в союзных республиках”, освещен процесс создания филиалов Комитета в Закавказье, проделанные работы, в частности – подчеркнуто обстоятельство важной роли Тбилисского и Батумского филиалов с точки зрения отправки полученной из зарубежья материальной помощи в Советскую Армению, обеспечению армянских беженцев временными жилищами и содействия процессу репатриации.

Основываясь главным образом на архивных материалах, подробно представлены почти все филиалы Комитета. В виде исключения, советское правительство позволяло Комитету действовать и в других союзных республиках.

В третьей главе – “Деятельность Комитета помощи Армении зарубежом и взаимоотношения с партиями армянской диаспори” представлен процесс организации филиалов Комитета помощи Армении в Иране, странах Ближнего Востока, Индии, а также исследован стиль работы Центрального комитета Компартии Армении по отношению к армянам Диаспори, в частности – вопрос взаимоотношений. Освещены подробности, связанные с деятельностью Комитета в странах Западной Европы и на Балканах, в контексте которых исследован также вопрос связей Комитета с традиционными армянскими партиями, армянской диаспорой, представлена их позиция по отношению к Советской Армении. В работе освещается также деятельность филиалов Комитета в странах Северной и Южной Америки.

В заключении обобщены основные результаты и выводы диссертации.

MAKARYAN LILIT ASKANAZ

ACTIVITIES OF ARMENIAN RELIEF COMMITTEE
(1921-1937)

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of "History of Armenia" 07.00.01.

The defense of the dissertation will be held on 16 December 2011, 14⁰⁰ at the session of the Specialized Council 004, by the Institute of History of National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Avenue 24/4).

SUMMARY

The thesis is devoted to an almost unresearched and actual topic - the activities of Armenian Relief Committee in 1921-1937.

The thesis consists of an introduction, three chapters, conclusions, list of references and literature. In the introduction the urgency, purpose and objectives of the topic is grounded, the scientific novelty of the thesis is presented, the chronological frameworks of the study are motivated, the theory of sources and literature related to the problem is given.

In the first chapter - "The establishment and activities of Armenian Relief Committee in Armenia", Armenian people's difficult social-economic situation, the need for social organization of the Armenian Relief Committee in order to save people from starvation, disease and poverty, organizational process, aims and objectives of Armenian Relief Committee, participation in the reconstruction of Soviet Armenia are introduced. The situation of Armenian refugees is presented, the organizational problems of repatriation are raised, the cooperation between the Armenian Relief Committee and repatriants' unions, a significant contribution to the organization of the patriotic cause is shown. The problem of repression that occurred in the Soviet Union in 1930, is also studied, which left its mark also on the activities of the Armenian Relief Committee. Since the beginning of 1930-ies repression was evident towards different social stratas, especially government and party leaders, intellectuals; among which were as well the leading members of Armenian Relief Committee. The process of Armenian Relief Committee liquidation in Armenia up to December 3, 1937 is presented, in spite abroad, especially in USA the branches of Armenian Relief Committee worked until May 1938.

In the second chapter "Creation and activity of Armenian Relief Committee's branches in Soviet republics" the process of Committee's branches foundation in Transcaucasia, the works performed are represented, particularly, the circumstance of important role of Tbilisi and Batumi branches is stressed – from the viewpoint of receiving financial assistance from abroad to Soviet Armenia, providing Armenian refugees with temporary dwellings and assistance

to repatriation process. Based primarily on archival data, almost all Armenian Relief Committee's branches acting in Soviet Republic are presented in details. With the exception, the Soviet government allowed Armenian Relief Committee to operate in other Soviet republics as well.

In the third chapter - "Armenian Relief Committee's activity abroad and the relationship with the parties of the Armenian Diaspora" the process of organizing Committee's branches in Iran, in countries of Middle East, India, as well as the style of the Central Committee of Communist Party of Armenia towards Armenians abroad is presented, in particular the mutual relationship. The details related to the Armenian Relief Committee activity in Western Europe countries and the Balkans, in the context of which the issue on the latter's ties with the parties of the Armenian diaspora also has been studied, presented their position towards Soviet Armenia is presented. The activity of Armenian Relief Committee's branches in the countries of Northern and Southern America is also presented.

In the conclusion the main results and background of the thesis are summarized.